



23248

ԹՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՇ




ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԿԱՆՈՆԱՎՈՐՈՒՄ  
ՅԵՎ  
ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՑԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՃՐԴԻ

ՅԵՐԵՎԱՆ 1928 թ.



15 JAN 2010

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵ՞Ք

2210

4-64

um

ԱՇԽԱՏԱՎՈՐՁԻ ԿԱՆՈՆԱՎՈՐՈՒՄ  
ՅԵՎ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

10001


## Թարգմ. Վ. ԱՇՏՎԻԿՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՑԱԽԻ ՈՒԹՅԱՌՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՄԴՐԻ ԲՐԱ 8/19

ՅԵՐԵՎԱՆ

1928 թ. ՄԱՍԻՆԻՑՈՒԹ



19 FEB 2013

23298

## Գ Լ ՈՒ Խ Ե

# ԱՇԽԱՏՈՎԱՐՁԻ ԿԱՆՈՆԱԿԱ ՈՐՈՒՄ ՑԵՎ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## 1. ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԻՖԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԻՖԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՅՈՒԹՅՈՒՆԸ ԽՍՀՄ ՄԵԶ

Միությունների տարիֆային աշխատանքի, ինչպես և առեն  
աեսակ այլ աշխատանքի եյությունը ամեն մի տվյալ ժոմենում  
վորոշում և միությունների ընդհանուր խնդիրներով, յենթարկ-  
ված և այդ խնդիրներին և բղխում և դրանցից : Իսկ ի՞նչպիսի խըն-  
դիրներ են կանգնած ԽՍՀՄ միությունների առաջ և ի՞նչն և վորո-  
շում նրանց տարիֆային աշխատանքի եյությունը :

Արհեստակցական միությունների, վորոնք համարյա զիմովին  
միացնում են ամբողջ բանվոր գասակարգը, կարեռագույն և ա-  
ռաջնահերթ խնդիրը հանդիսանում է իրենց անդամների տնտեսա-  
կան շահերի բազմակողմանի և յեռանդուն պաշտպանությունը:  
Դլապար պարտականությունը, վոր միություններն ամեն որ կա-  
տարում են իրենց անդամների մասսայի առաջ, այդ բանվորական  
մասսաների նյութական և իրավական դրության մասին հոգալն ե:

Սակայն, խորհրդային պետության մեջ արհմիությունների  
գործունեյությունը չպետք է և չի կարող սահմանափակվել միայն  
բանվորական մասսաների տնտեսական շահերի պաշտպանությամբ:  
Մեր յերկրում, պրոլետարիատի գիլտատուրայի յերկրում, ամբողջ  
խոշոր արդյունաբերությունը բանվոր գասակարգի ձեռքում է, նրա  
պրոլետարական պետության ձեռքում: Սրանց պարզ է, վոր տըն-  
տեսության և արդյունաբերության մեջ կազմվող ամբողջ կուտա-  
կումը, գրանցից ստացվող ամբողջ շահույթը, անցնում և պետու-  
թյան լիակատար տնորբնությանը, պետություն, վորի կառավա-  
ճողը բանվոր գտառկարգն ե: Այսպիսով, բանվոր դասակարգը հան-

ՏԱՅԱՐԱԿԱՆ ՏԱՐԱՐԱ  
ՊԱՏՎԵՐ 1300  
ԳՐԱԿԱՆ. 515-Բ. ՏԻՐԱԳ 500.

գիտանում ե պետական արդյունաբերության և տնտեսության ըստ-  
աղջած բոլոր կուտակումների և շահույթների լիազոր տերը և  
անորենը:

Բանվորների վորոշ չերտերում, հատկապես այն բանվորների  
մեջ, գորոնք յեկել են գյուղերից և արդյունաբերություն մտել  
վերջին յերկու տարվա մեջ և վորոնք վորոշ չափով իրենց վրա նա-  
յում են իրեւ «Հյուրերի», Փարբիկաների և գործարանների ժա-  
մանակալոր բնակիչների վրա, —հաճախ ծագում և այս հարցը՝  
իսկ ինչո՞ւ բանվոր դասակարգը, տեր լինելով, չի կարող աշխա-  
տավարձը բարձրացնել այնքան, ինչքան ցանկալի յէ բանվորների  
ամեն մի խմբակին: Այսպիսով, ծագում ե մի ուրիշ հարց՝ արդյուք  
իշխանության գլուխ կանոնած բանվոր դասակարգը կարո՞ղ է աժ-  
րող շահույթը և արդյունաբերության ու տնտեսության ամբողջ  
կուտակումը բացառապես գործարել աշխատավարձի բարձրաց-  
ժան վրա:

Այս հարցերին պատասխանելու համար, հարկավոր և հիշել  
այն, ինչ մենք արգեն կարդացել ենք (II և III գլուխներում)՝ մեր  
տնտեսության մասին: Կարճ կարելի յե պատասխանել հետևյալը:

Պրոլետարիատի դիկտատուրայի ուժն ու ամրացումը, բանվո-  
րական մասսաների նյութական դրության հետագա լավացումը՝  
հիմնվում ե պետական արդյունաբերության և տնտեսության զար-  
գացման վրա: Խորհրդային Միության արտադրողական ուժերի  
զարգացման վրա: Գործարանների հներերի խարխուլ լինելը, գոր-  
ծարանների սարքավորման—դազգյաների և մեքենաների—մոշ-  
վածությունը բանվոր դասակարգի առաջ դնում ե նոր գործարա-  
նույին շենքեր կառուցելու, նոր սարքավորում ձեռք բերելու խոն-  
դիրը: Իսկ ել ինչի հաշվին կարող ե կատարվել Փարբիկա-գործա-  
րանային նոր շենքերի կառուցումը և հների նորոգումը, յեթե վոչ  
արդյունաբերության կուտակման հաշվին: Վ. Ի. Լենինը՝ գրում  
եր, վոր մենք պետք ե մեր պետության մեջ տնտեսության մե-  
ծագույն ու մեծագույն խնայողության գնով հասնենք այն բանին  
գորպեսզի ամեն մի փոքրագույն խնայողություն պահպի մեր խո-  
շոր մեքենային արդյունաբերության զարգացման համար, ելեք-  
տորֆիկացիայի զարգացման համար... Հասկանալի յէ, վոր մենք  
շենք կարող ապրել ու զարգանալ գործարանների ու Փարբիկա-  
ների սարքավորման և նրանց շենքերի մաշելու ու խարխումելու  
պայմաններում: Վորպեսզի խնայողությունները և շահույթներն

ամեն տարի ամեն, շատանան, ու դրա հետ միասին շատանու նաև  
աշխատավարձը, —անհրաժեշտ ե լայնացնել, մեծացնել և լավաց-  
նել մեր տնտեսությունն ու արդյունաբերությունը:

Ժողովրդական տնտեսության այս հիմնական խնդրով ել վո-  
րաշվում ե միությունների տարիփային աշխատանքը և նրանց աշ-  
խատավարձի քաղաքականությունը պետական սոցիալիստական  
արդյունաբերության մեջ զբաղված բանվորների վերաբերմամբ:  
Այսուղե միությունների տարիփային աշխատանքի եյությունն  
այն է, վորպեսզի բանվորների և ծառայողների տնտեսական  
գրության լավացումը ժողովրդական տնտեսության աճմանը և  
ամբացմանը համաշափ կատարվի:

## ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԿԱՆՈՆԱՎՈՐՈՒՄԸ ՅԵՎ ՆՈՐՄԱՅԻ ՅԵՆԹԱՐԿԵԼԸ

Տնտեսության խորհրդային սոցիալիստական սխոտեմի հիմ-  
նական տարբերությունը և առավելությունը կապիտալիստական  
անտեսությունից այն է, վոր այդ վարփում և պետական պլանա-  
վորման հիմունքով: Այս պատճառով միությունների տարիփա-  
յին աշխատանքն աշխատավարձի ասպարիզում միայն նրա բար-  
ձրացմանը հետամուտ չէ: Արհմիությունների տարիփային աշ-  
խատանքի խնդիրների մեջ մտնում ե նույնական և աշխատավարձի  
ճիշտ բաշխումն արդյունաբերության և տնտեսության զանազան  
ճյուղերի բանվորների միջև, ԽՍՀՄ առանձին ուայնների մի-  
ջև, բանվորների առանձին կատեգորիաների միջև և այլն: Արհ-  
միությունների պլանաշափ ազգեցությունն աշխատավարձի ճիշտ  
բաշխման վրա սովորաբար կոչվում է աշխատավարձի կանոնա-  
վորում:

Այն բանի շնորհիվ, վոր խորհրդային կարգում բանվոր գա-  
ռակարգի ձեռքին են գտնվում քաղաքական իշխանությունը և իր  
կողմից պլանավորվող տնտեսության հրամայող բարձունքները,  
լայն հնարավորություն կարգավարար և պլանաշափ իերպով  
աշխատավարձի քաղաքականությունն ուղղել գեպի բանվոր գա-  
ռակարգի շահույթը: Մեզ մոտ արհեստակցական միություններին  
այս իրազործում են խորհրդային պետության որգանների հետ  
միասին:

Աշխատավարձի կանոնավորման ձևերը տարբեր են և համապատասխանում են մեր յերկրի տնտեսական զարգացման ձևերին։ Այսպես կոչված «ռազմական կոմմունիզմի» շրջանում աշխատավարձը կանոնավորվում էր պետական ուրմայի յենթարկման միջոցով։ Յշխատավարձի նորմայի յենթարկման այդ սիստեմի առանձնահատկությունները հետապյաներն են։

ա) ըստ կյանքի թանկության տեղերը գոտիների բաժանելը, ամեն գոտու և ամեն մի տարի ֆային կարգի տարիքույն դրույքի չափը, տարիքային կարգերի թիվը և ըստ այնմ պաշտօնների և արհեստների բաժանումը—այս բոլորը սահմանում եր որենք խիստ կենտրոնացրած կարգավ։

բ) սահմանված դրույքները և տարիքային կարգերի բաշխումը պարտադիր եր ինչպես բանվորների, այնպես և գործարանների վարչությունների համար։

Նորմայի յենթարկման այս սիստեմը լիովին ճիշտ եր այն ժամանակ և համապատասխանում եր տնտեսության կառուցման և կազմակերպության պայմաններին։

«Ռազմական կոմունիզմի» ժամանակ սմբռողջ արդյունաբերությունը և տնտեսությունը դեկավարվում ու կառավարվում եյն խստագույն կենտրոնացման կարգով։ Ամբողջ բանվորական ուժը բաշխվում և ոգտագործվում եր աշխատավի պարհակի և աշխատանքի մորթիվացիայի կարգով։ Ամեն վոք պարտավոր եր աշխատել այսեղ, վորտեղ ցույց կտային պետական իշխանության որդանները։ Այս սպայմաններում անմիջապես ինքը պետառթյունն եր հոգում բանվորական ուժի վերականգման մասին՝ սննդամթերքների և լայն սպառման առարկաների կազմակերպված բաշխման միջոցով։ Յշխատավարձի մի չնչին մասը, գեկրեատով սահմանված չափով, վճարվում եր դրամով։

Նոր տնտեսական քաղաքականությունն առաջ բերեց աշխատավարձի կանոնավորման ձևերի կտրուկ փոփոխություն։ Նոր տնտեսական քաղաքականությունն աշխատանքի կազմակերպության ասպարիզում պետական աշխատանքի պարհակից աղատ վարձման սիստեմին անցնելու անհրաժեշտություն առաջ բերեց։ Անհրաժեշտ եր աշխատանքի վարձատրությունը կառուցել աշխատողի անձնական շահագրության վրա, ինչ վոր չեր ապահովում առաջները կիրառվող նորմայի յենթարկման սիստեմը իսկ դրան կարելի յեր հասնել աշխատավարձը սահմանելով ըստ աշխատանքի արդյունքի միայն։ Բնկ։ Տոմսկին մատնանշոմ ե, վոր «տնտեսական հաշիքի և զարգացող շուկայի պայմաններում, աշխատավարձի պետական նորմայի յենթարկման հին սիս-

տեմն աղաղակող հակասության մեջ և հաստրակական եկոնոմիկայի ընդհանուր պայմանների հետ։ Ստեղծված պայմաններում մեր տարիքային քաղաքականության ամենաուղղի հանապարհն այն ե, վոր անցնենք հավաքական պայմանների սիստեմին, վորոնք կնքվելու յեն մի կողմից ձեռնարկատերերի ու գործարանային վարչության և մյուս կողմից՝ միությունների միջև։

## ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՏԱՐԻՖԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

«Անկասկած և՝ գրում և ընկ։ Տոմսկին «Արհմիությունները ուղիղ վրա» գրքույկում, վոր այս կամ այն միջոցառությունները—աշխատանքի արտադրական կարգապահության հասառում և այլն, յերբեմն կանդիպեն մասսայի հակազդեցությանը, յերբեմն արգարացի կերպով, յերբեմն ել վո՛չ, մի ամրող շարք հակասություններ կատեղեն վարչության և բանվորական մասսայի միջև, և այս, վորոշ հանդամանքներում, կարող և հասցնել մի շարք մանր ու խոչըր կոնֆլիկտների, հարաբերությունների սրման և եքսցեսների, վորոնք կարող են խափանել հանրապետության արտադրողական ուժերի վերականգնման ամրող աշխատանքը։ Այսպիսի հանդամանքներում վարձու բանվորների տնտեսական շահերի պաշտպանությունը և յերեվան բերելն արհեստակցական միությունները պետք ե ամբողջովին իրենց վրա տոնեն, և այս ասպարիզում արհեստակցական միությունների և տնտեսական որդանների փոխհարաբերությունները հնարավոր են միայն իրեւ համաձայնության յեկող կողմերի փոխհարաբերություններ»։

Նոր տնտեսական քաղաքականության անցնելուց հետո, աշխատանքի պայմանների և աշխատավարձի կանոնավորման լավագույն ձևը ճանաչվեց հավաքական պայմանագիրը, վոր կընքում և արհեստակցական միությունների տնտեսական որդանի միջև։

Հավաքական պայմանագիրը հանդիսանում է վարձողի և նրա ժուտ զրագված բանվորների բոլոր աշխատանքային հարաբերությունների ու կողմերի միջև գոյություն ունեցող պարտավորությունների ամենազլսավոր հիմքը։ Նա պարտավորեցնում է վարձողին պայմանագիրի ներգործության ամրող ժամկետում կատարել պայմանագրի շարտերած պայմանները և վարձողը

բավունք չունի առանձին բանվորի և ծառայողի համար պայմանագրի համեմատությամբ ավելի վատ պայմաններ սահմանել : Այսպիսով, հավաքական պայմանագրիրը վորոշում և վարձման անձնական, առանձին աշխատանքի պայմանագրերի բովանդակությունը, նաև նրանց առնում ե իր պաշտպանության տակ :

Հավաքական պայմանագրի կողքին, վոր վորոշում և բոլոր բանվորների աշխատանքի և աշխատավարձի ընդհանուր պայմանները, կան նույնպես աշխատանքի պայմանագրեր : Վարձողն աշխատանքի պայմանագրիրը կնքում է ամսիջականորեն ամեն մի բանվորի և ծառայողի հետ առանձին, դրա մեջ պարունակվում են տվյալ բանվորին կամ ծառայողին վերաբերող պարտավորությունները : Աշխատանքի պայմանագրիրը կնքում է ինչպես հավաքական պայմանագրիր լինելու, նույնպես և չլինելու դեպքում : Հավաքական և աշխատանքի պայմանագրերի հիմնական տարրերությունը հետևյալն է :

Հավաքական պայմանագրիրն աշխատանքի ու վարձման պայմաններ սահմանելով բոլորի համար, չի սահմանում վարձման փասուը և չի չոչափում առանձին անձերին անուն-անուն : Իսկ աշխատանքի պայմանագրիրը սահմանում է աշխատանքային հարաբերություններ և փոխադարձ պարտավորություններ ամեն մի վարձող անձի վերաբերմամբ : Աշխատանքի պայմանագրում վորոշում և, թե ինչ աշխատանք, վորտեղ, վոր ցեխում և ինչ վարձատրությամբ պետք է կատարի, որինակ, բանվոր իվանովը : Իսկ հավաքական պայմանագրիրն առաջուց, դեռ միշտ իվանովի աշխատանքի մանելը, արդեն հաստատել ե, թե այդ աշխատանքը կատարող բանվորը, լինի նա իվանով, Պետրով կամ Սիլորով, պետք է ստանա այսքան վարձատրություն : Այդ վարձատրությունն ել մտցրվում է աշխատանքի որայմանագրի մեջ, յերբ բանվորն աշխատանքի յե մտնում : Աշխատանքի պայմանագրի սահմանած աշխատանքի պայմանները, դործող որենսդրության համաձայն, չեն կարող ավելի վատ լինել հավաքական պայմանագրի փորչած պայմանների համեմատությամբ :

Ասածից բոլորովին պարզ ե, վոր հավաքական և աշխատանքի պայմանագրերն ամենեին իրար չեն բացասում և չեն փոխարիւնում : Հավաքական պայմանագրիրը միայն լրացնում է վարձման աշխատանքի պայմանագրիրը, միևնույն ժամանակ հանդիսանալով արհեստական միությունների հետ :

աների տնտեսական շահերի պաշտպանության միջոց, մի միջոց, վոր նրանց հնարավորություն ե տալիս ընդհանուր, միացյալ հավաքական ջանքերով ավելի պլանաչափ կերպով լովացնել աշխատանքի պայմանները և բարձրացնել իրենց կյանքի մակարդակը :

Հավաքական և աշխատանքի պայմանագրերի կողքին, միությունների՝ աշխատավարձը կանոնավորող՝ աշխատանքում տեղ են բանում տարիփային համաձայնությունները, իսկ վերջերս նըշանավոր չափով տարածվել ե այսպես կոչված հաստիքի (օւագ) փատեմը և աշխատավարձի պետական նորմայի յևնթարկումը : Դրանց հետ հետո կը ծանոթանանք : Բայց այսուղ իսկ հարկադրությունը և նշել, վոր ներկայումս ամենամեծ նշանակություն ունեն հավաքական պայմանագրերը :

Թե ինչպես տարիփային աշխատանքի որբակտիկայում լրայն ու ամենուրեք տարածվել են հավաքական պայմանագրերը, վկայում են հետեւյալ տվյալները :

Առ 31 հունվարի 1927 թ. վարձով աշխատողների և այն թիությունների մոտ հաշվառման յևնթարկվածների ընդհանուր թիվը հավասար եր 7,810,300 մարդու :

Գործող հավաքական պայմանագրերն ընդգրկում ենին 7,004,400 մարդու կամ 89,7% :

Արդյունաբերության մեջ հավաքական պայմանագրերով ընդգրկվածների թիվը հավասար եր 97,9% : Առանձին թիությունների վերաբերմամբ հավաքական պայմանագրերով ընդգրկվածների պրոպորցիան նույնիսկ ավելի բարձր եր : Այսպիս :

Հանքափորներ	97,9%
Մետաղագործներ	97,6%
Մանածագործներ	99,3%
Ցերկաթուղայիններ	99,8%

Հավաքական պայմանագրերի կենսագործման առավելագույն արհեստական միությունների վրա հակասական պարտականություն և դրվում : Նրանք ամեն տեղ և ամենուրեք, ինչպես և հավաքական պայմանագրերի կնքման ժամանակ, անխուսափելիորեն յելակետ ունին իրենց ամենամասն գլխավոր խնդիրը՝ բանվորական մասսաների իրավական և անտեսական շահերի պաշտպանությունը : Թե կո՞չիլիկատային կոնֆլիկտային հանձնաժամանակի առգանձում—բնահատիչ կոնֆլիկտային հանձնաժամանակի առգանձում—բանվորների շահերի ներկայացուցիչը լինելիս, թե հաշուարար առյաներում, կամ թե յերբ բանվորների

պահանջները վճռվում են դատական որդաններում, —միությունը պարտավոր է ձգտել այն բանին, վոր տնտեսական որդանները հավաքական պայմանագրով իրենց վրա վերցրած պարտավորությունները լրիվ ու ճշգրիտ կատարեն:

Կնքած հավաքական պայմանագրերը պետք է գրանցվի Աշխատանքի ժողովրդական Կոմիսարիատի որդաններում: Հավաքական պայմանագրի գրանցման մոմենտից՝ նրա պայմաններն որենքի ուժ են ստանում: Վարձողի կողմից հավաքական պայմանագրի պայմանները չկատարելը հետամտվում է որենքով: Հետեւաբար, մեր աշխատանքային որենսդրությունն իր պաշտպանության տակ է առնում հավաքական պայմանագրերը: Այս պատճենով, բացի արհմիություններից, վարձողների կողմից հավաքական պայմանագրի պայմանների կատարման հսկողությունն իր վրա յեւ վերցնում պետությունը հանձինս աշխատանքի տեսուչների—Աշխատողկոմատի որդանների: Բացի այդ, Աշխատողկոմատը գետեում է աշխատանքին վերաբերող որենքների և կառավարության բոլոր տնօրինությունների կառարմանը: Յեթե հավաքական պայմանագրի վորեն հողված սահմանում է վարձվողների համար աշխատանքի ավելի վատ պայմաններ, քան այն պայմանները, վորոնք նախատեսված են Խորհրդային իշխանության որենքներով ու տնօրինություններով, ապա Աշխատողկոմատն իրավունք ունի փերացնել այդպիսի հողվածը:

## 2. ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

### ՈՒՄ Ե ՊԱՇՏՈԱՆՈՒՄ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Այս հարցին, թե ում է պաշտպանում հավաքական պայմանագրերը, այսինքն մարդկանց ինչ շրջանակի վրա յեւ տարածվում երաներգործությունը, բավականաշափ պարզ պատասխան է տառիս մեր արհեստական միությունների կազմակերպչական կառուցվածքը:

Հասկանալի յեւ, վոր, միությունների արտագրական կուռցվածքի ժամանակ, հավաքական պայմանագրին ընդգրկում է տվյալ արտագրության միության անդամ յեղող բոլոր աշխատադիրներին: Բայց, բացի այդ, մեր միությունները ներկայացնում են և պաշտպանում վոչ միայն իրենց անդամների շահերը, այլև անձերինը, վորոնք միության անդամ չեն, բայց աշխատաւմ

են տվյալ ձեռնարկության մեջ: Լիովին բնական ե, վոր մեզ մոռ կնքած հավաքական պայմանագրի պայմանները տարածվում են տվյալ ձեռնարկության մեջ զբաղված բոլոր բանվորների և ծառայողների վրա, վոչ միայն արհմիությունների անդամների, այլև այն անձերի, վորոնք արհմիության անդամ չեն: Աշխատանքի Որենսդրքի 16-րդ հոդվածը սահմանում է. «Հավաքական պայմանագրի պայմանները տարածվում են տվյալ ձեռնարկության կամ հիմնարկության մեջ աշխատող բոլոր անձերի վրա, անկախ այն բանից, արդյոք նրանք պայմանագրի կնքած միության անդամ են, թե վոչ»:

Այս կանոնից բացառություն է արվում միայն այն անձերի վերաբերմամբ, վորոնք վարչական պաշտոններ են վարում, յեթե նրանք ողբական են բանվորներ և ծառայողներ վարձելու և արձակելու իրավունքից, նույնպես և այն անձերի վերաբերմամբ, վորոնք նորմայի յեն յենթարկում բանվորների աշխատանքը Թասնավոր ու կոնցեսսիոն ձեռնարկություններում (և վոչ պետականներում) զբաղված այս կատեգորիայի անձերի վրա հավաքական պայմանագրերի ներգործությունը չի տարածվում:

### ԳԼԽԱՎՈՐ ՑԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԵՐ

Հավաքական պայմանագրերը բաժանվում են յերկու հիմնառական տիպի՝ ա) գլխավոր կամ ընդհանուր պայմանագրեր և բ) լոկալ կամ տեղական պայմանագրեր:

Գլխավոր են կոչվում այն հավաքական պայմանագրերը, վորոնց ներգործությունը տարածվում է արդյունաբերության վորեւ ամբողջ ճյուղի, կամ տնտեսության բոլոր գործարանների և ֆարբերկանների, կամ թե մեկ խոշոր, համապետական տնտեսական որդանի ձեռնարկություններում և հիմնարկություններում աշխատող բանվորների վրա: Այսպիսի պայմանագրերին ե վերաբերում, որինակ, այն հավաքական պայմանագրերը, վոր կնքում է յերկաթուղականների միության կենտրոնական կոմիտեն, Հաղորդակցության ձանալարչների ֆողովրդական կոմիսարիատի հետ, այն պայմանագրերը, վոր կնքում է Կապի աշխատողների միությունը Պոստի և Հեռագրի ֆողկոմատի հետ և այլն: Այդ պայմանագրերի պայմանները տարածվում են հիշյալ տնտեսական որդանների առանց բացառության բոլոր ձեռնարկություն-

Ների ու հիմնարկությունների վրա, վորտեղ ել վոր այդ հիմնարկությունները և ձեռնարկությունները գտնվելիս լինեն:

Գլխավոր հավաքական պայմանագրեր կնքելիս, սովորաբար, իրեւ կողմեր հանդես են դալիս մի կողմից՝ միությունների կենտրոնական կոմիտեները և մյուս կողմից՝ համագետական, տնտեսական կամ խորհրդային որգանները:

Լոկալ կամ տեղական պայմանագրեր համարվում են այն պայմանագրերը, վորոնց ներգործությունը տարածվում է մեկ ձեռնարկության կամ տեղական մի խումբ ձեռնարկությունների և հիմնարկությունների մեջ զբաղված բանվորների և ծառայողների վրա: Տեղական պայմանագրի կնքելիս, իրեւ կողմեր հոգեցնեն դալիս են դալիս համագալատախան միության նահանդական, ույանական կամ գավառական որգանները և տվյալ ձեռնարկության կամ հիմնարկության վարչությունը:

Հաճախ կողմերը գլխավոր պայմանագրում նախատեսում են տեղական, գլխավորին լրացնող, լոկալ պայմանագրերի կնքման հնարավորությունը: Այս արվում են նրա համար, վորագետի տեղական որգաններին հնարավորություն տրվի, հաշվառելով տեղական ձեռնարկությունների ֆինանսական հնարավորությունները, տեղական պայմանագրերում, գլխավոր պայմանագրի համամատությամբ, աշխատանքի ավելի լավ պայմաններ հաստատեն:

Գլխավոր պայմանագրերի առավելությունը տեղականներից այն է, վոր այդ կնքելիս արհմիությունները հնարավորություն ունեն ավելի լավ վորոշելու ամբողջ արդյունաբերության ֆինանսական դրությունը, ֆարբիկանների և վործարանների ապահոված լինելը պատվերներով ու հում նյութով, հաշվառելու, թե ինչքան են լայնանում ձեռնարկությունները, և արդյոք բանվարական ուժի մեծացման պահանջ կամ և այլն: Միության մեկ տեղական որգանի համար անկարելի յև այս բոլորը պարզել խոշոր տրեսափ մեկ-յերկու ձեռնարկության տնտեսության հիման վրա: Իսկ առանց պարզելու արդյունաբերության մի ամբողջ հյուրը տնտեսական ու ֆինանսական դրությունը, անկարելի յև ու անհար հավաքական պայմանագրի կնքել բազմակողմանի հիմնարկագրած ձեռով, վորովհետեւ աշխատավայրի մանր ձեռնարկությունների համար, վորոնք միացած չեն համամիութենական միացումների—տրեսունների մեջ:

Այս հավաքական պայմանագրերը, վոր կնքմած և առանց լրիվ հաշվառելու տնտեսական որգանի տնտեսական դրությունը, կը հաստատի աշխատանքի այնպիսի պայմաններ և աշխատավարձի այնպիսի չափ, վոր, յեղած հնարավորությունների համեմատությամբ, կամ վատ կը լինեն կամ այնքան բարձր, վոր ձեռնարկության համար ծանր ու անիրազործելի կը դառնան: Ավելի վատ բան չկա, քան տնտեսության ուժերից բարձր ու անիրազործելի հավաքական պայմանագրը—դա հասցնում է այն բանին, վոր աշխատավարձի գծով աճում է ձեռնարկության պարտքը բանվորներին, և այդ ժամանակ պայմանագրին իր նշանակությունը կորցնում է բանվորի համար, կամ այն բանին, վոր ձեռնարկությունն ուտում է իր միջոցները և փակելու առաջ կանոնավոր այսինքն դա վնասում է աշխատողների շահերին, վորոնք իվերջու գործազուրկ են մնում:

Գլխավոր պայմանագրերի սխտեմի թերություններն այն են վոր կենարոնում կնքմած գլխավոր պայմանագրը սակորաբար հնարավորություն չի տալիս միության անդամների ամբողջ ժամանակային, արդյունաբերության տվյալ ճյուղի բոյոր աշխատուներին գրավել հավաքական պայմանագրի պայմանների բարձակունաչափ ակտիվ մշակման ու քննության գործի մեջ: Այս թուրացնում է նրա կազմակերպիչ ու գաստիբարակչակ սն նշանակությունը: Սակայն, այս թերությունը նշանավոր չափով վերանում ե այն գետքերում, յերբ գլխավոր պայմանագրիը նախատեսնում է տեղերում լրացրցիչ լոկալ պարմանագրեր կնքելու հնարավորությունը: Բացի այդ, հասկանալի յե, վոր տեղական պայմանագրերը պետք է կնքելու տեղական մանր ձեռնարկությունների համար, վորոնք միացած չեն համամիութենական միացումների—տրեսունների մեջ:

## ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՅԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱՐԵՐԵՐ

Հավաքական պայմանագրում շարադրված աշխատանքի բոլոր պայմանները կարելի յե բաժանել յերկու հիմնական խմբակի: 1) աշխատանքի նյութական պայմաններ, վորոնք չեն կարող նորոգայի յենթարկվել որենսգրությամբ, և վորոնք ուղղակի կախման մեջ են գտնվում տվյալ ձեռնարկության կամ տնտեսության ֆի-

հանսական դրությունից, որինակ՝ աշխատավարձի չափը, մշակման նորմաները, գործային գնահատումները և այլն, ու 2) աշխատանքի իրավական պայմանները՝ վարձման և արձակման կարգը, վարձողի տված արձակուրդները և այլն, վորոնք աշխատանքի որենսդրությունով վորոշված են և պաշտպանվում են, բայց հավաքական պայմանագրի կնքման կարգով, աշխատանքի գործող որենսդրության համեմատությամբ, կարող են լավագույն:

Լիովին բնական ե, վոր հավաքական պայմանագրում պետք է մատնաշին աշխատանքի այն պայմանները, վորոնք կամ բարովին չեն նախատեսված աշխատանքի որենսդրությունով, կամ, աշխատանքի գործող որենսդրության համեմատությամբ, տուալետություններ, լավացումներ են բերում բանվորների համար: Բոլորովին անթույատրելի յե հավաքական պայմանությում աշխատանքի պայմանները, որենսդրության նորմաների համեմատությամբ, վատացնել, և յեթե թյուրիմացությամբ պայմանները մտել են պայմանագրի մեջ, որենքը անվավերե ճանաչում այդ: Հարկավոր չե նույնպես պայմանագրում կրկնել այն պայմանները, վորոնք սահմանված են գործող ուժենքներով, վորովհետեւ ամեն մի վարձող պարտավոր ե կատարել ԽՍՀՄ որենքները և նրանց խախտման համար դատարանով քաղաքացիական և քրեական պատասխանատվության ե յանթարկվում: Այս պատճառով, աշխատանքի որենսդրությունով նաև խատեսված նորմաները և կանոնները, վորոնց պահելը լիովին պարտավորեցուցիչ և վարձողի համար, չեն կարող յերկու կողմի պայմանագրի նյութ դառնալ:

Իսկ ի՞նչ պայմաններ պետք են նախատեսի հավաքական պայմանագրիք: Վարձողի և արհեստական միության համաձայնության գլխավոր նյութը հանդիսանում ե աշխատավարձի այն չափը, վորի վերաբերմամբ հավաքական պայմանագրում պայմանագրում են տվյալ ձեռնարկության, հիմնարկության կամ անտեսության մեջ զբաղված բանվորների բոլոր իմրակների համար:

Աշխատանքի որենսդրությունը (աշխատավարձի նորմայի մեջարկման դեպքերի բացառությամբ) սահմանում և միայն աշխատավարձի ամենափոքր չափը (մինիմումը), ընդհանուր բանվորների բոլոր իմրակների համար, վորից ցած վոչ մի վարձող չի

կարող վճարել հասակավոր բանվորին՝ նորմալ աշխատանքի ժամանակի համար: Սրանով պետությունը յերախավորում ե միայն բանվորի ապրուստի մինիմումը, վորը նկատի ունի անվարժ, անվորակյալ բանվորին և բարձր չե ամենահետամաց և ամենից քիչ ապահովված տնտեսության ուժերից:

Այսպիսով, կարելի յե համոզված ասել, վոր աշխատավարձի (նրա չափի, սիստեմի, վճարման ձևերի ու ժամկետների) հարցը հանդիսանում ե ամբողջ հավաքական պայմանագրի և միությունների ամբողջ պայմանագրի գործին վերաբերող աշխատանքի հիմական առանցքը:

Պակաս կարենոր չե և այն հարցը, վոր վերաբերում ե բանվորների գործվածքների մշակման նորմաներին: Գուցե, գիխավոր պարտավորությունը, վոր հավաքական պայմանագրով ընկնում է բանվորի վրա, պայմանագրում պայմանավորված գործվածքների մշակման նորմաները կատարելն ե: Վարձողը, պայմանագրով պարտավորություն ստանձնելով վճարել այսքան աշխատավարձ, բնական ե, վոր պահանջում ե բանվորից յերաշխիքներ ու պարագարություններ այսքան աշխատանք, այս ինչ ժամանակում կառարելու վերաբերյալ: Մշակման այս կամ այն նորմաներ հատականությունը գործում և աշխատանքի լարումը, բանվորի վորոշ ուժի ու եներգիայի ծախսումը, բացի այդ, մշակման հաստատված նորմաների չափից ե կախված գործային գնահատումների չափը, վոր գործում և աշխատավարձի հաստական չափը: Այս պատճառով մշակման նորմաները և գործային գնահատումներն այլ կերպ չեն հաստատվում, քան կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ հենց հավաքական պայմանագրում, կամ թե կողմերն այդ աշխատանքը վատահում են ձեռնարկությունների գնահատիչ-կոնֆլիկտային հանձնաժողովներին, վորոնք կազմված են (վարձողների և բանվորների) հավասար թվով ներկայացուցիչներից և լուծում են հարցերը վոչ այլ կերպ, քան կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Բանվորների նյութական չահերին վերաբերող հարցերը՝ աշխատավարձի չափը, սիստեմը, վճարման ժամկետներն ու ձևերը, իսուանի (ԵՐԱԿ) չավարտած գործային աշխատանքի վարձատության կարգը, մշակածի նորմաները, գործային գնահատումները և այլն, ինչքան վոր անկարելի յե նրանց, ինչպես վերևն աշխատավարձի միացինք, որենսդրական կարգով ձգրիտ նորմայի յենթարկելու-

մենամեծ տեղն են բոնում հավաքական պայմանագրերում։ Իսկ աշխատանքի իրավական պայմաններին վերաբերող հարցերին՝ ընդգունմանը և արձակմանը, արձակուրդներին և այլն, հարաբերաբար ավելի քիչ ուշադրություն են նվիրվում հավաքական պայմանագրում այն պատճառով, վոր մենք ունենք աշխատողների շահերը բավականաշափ պաշտպանող շատ լայն աշխատանքի որենոգրություն։ Այնուամենայնիվ, իբրև լրացում աշխատանքի զործող որենսդրության, հավաքական պայմանագրերը նախատեսում են նույնպես բանվորական ուժի վարձման և արձակման կարգի պայմանները, արձակման համար տրվող հատուցման չափը, աշխատանքի և հանգստի ժամանակի չափը, աշխատանքի պաշտպանության, աշակերտության, ակումբներ, գործարկումներ պահելու և այլ հարցերը։

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐԵՆՍԳԻՐՔԸ ՅԵՎ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Իսկ արդյոք չի կարելի կառավարմել առանց հավաքական պայմանագրերի և աշխատանքի բոլոր պայմանները կանոնավորել ու ընդունական կարգով։ Չի՝ կարելի։ Գետական արդյունաբերության զանազան ճյուղերի վերականգնումը և զարգացումն ընթառում է անհամաշափ քայլերով։ Այսպես կոչված թեթև արդյունաբերությունը (որինակ՝ մանածագործականը, ոննդինը, կաչվեղենինը), ծանր արդյունաբերության (որինակ՝ մետաղաբարդյունագործող արդյունաբերություն) և տրանսպորտի համեմատությամբ շատ ավելի արագ և վերականգնվում ու զարգանում։ Գործվածքների բաց թողումը, ձեռնարկությունների բեռնավորման աստիճանը, նրանց ապահովված լինելը հում նյութով ու պատվերներով, պատրաստ գործվածքների պայմանները և վաճառահնության շրջանը, բանվորական ուժի վորակում կազմը, ֆարբիկաների ու գործարանների սարքավորման բնույթը, աշխատանքի պայմանների ընդհանուր պարագաները և այլն, — այս բարբեր չափազանց տարրեր են ինչպես արդյունաբերության առանձին ճյուղերի, այնպես ել առանձին արդյունաբերական ուսուների համար։


Բացի այդ, ամեն մի ձեռնարկություն, նայած գործն ինչքան ընդուած է գրել, տարրեր վերադիր ծախքեր, արտադրության տար-

բեր ծախքեր ունի։ Ձեռնարկության կամ արդյունաբերության ամբողջ ճյուղի աշխատանքի այս բոլոր պայմանները, ամբողջությամբ առաջ, ստեղծում են զանազան նյութական բազա։ Աշխատավարձի չափը, աշխատանքի պայմանների, աշխատանքի ժամանակի նորմաները և այլն, վոր ըստ ուժի (ոսուլիան) և ընդունելի յեն ձեռնարկություններից վոմանց համար, ծանր և անիրազործելի յեն մյուսների համար։ Հետեւաբար, նայած այս կամ այն դրության, վոր տվյալ ձեռնարկությունը կամ արդյունաբերության ճյուղն ունեն ժողովրդական տնտեսության ընդհանուր սիստեմում, վորոշվում են նրա մեջ զբաղված բանվորների աշխատանքի ու աշխատավարձի պայմանները։

Արդյոք կարելի՞ յե ամեն մի ուսունի, արդյունաբերության ճյուղի, բանվորների վորակյալ կազմի և այլն այս բոլոր առանձնահատկությունները հաշվառել, յերբ աշխատանքի նորմայի յենթարկումը կատարվի բացառապես որենսդրական ձանապահուով, առանց հավաքական պայմանագրերի սիստեմի կիրառման։ Անպայման վո՞չ։

«Վոչ մի որենսդրություն, — զբում է ընկ. Խալաթովն իր «Աշխատավարձի քաղաքականության հարցի առթիվ» զրքույթում (Հրատարակ. «Էկոնոմիկը. Խիզը» -ի 1923 թ.)՝ զբանագույն մերը, ինչքան ել նա կատարյալ լինի և ինչքան ել արագ արձագանքի կյանքի պահանջներին, այնուամենայնիվ չի կարող հասնել այդ պահանջներին և շարունակ ծագող ու նույնքան ել աստիճանաբար կերպարանափոխվող կյանքի բարձրագան յերեվույթների իրավաբանական նորմաների փոխելիս՝ կուշանա»։

Բացի այդ, ընդհանուր տնտեսական յերեվույթների կողքին, վորոնք ընդհանուր համապետական նշանակություն ունեն և պահանջում են որենսդրական նորմայի յենթարկում, միշտ զոյտություն կունենան տեղական նշանակություն ունեցող բազմաթիվ յերեվույթներ, վորոնք չեն ամփոփվում որենսդրական նորմաներում, բայց այնուամենայնիվ, չափազանց կարեւոր են ավագանությունը կամ մարդկանց առանձին խմբակների համար։ Ահա այդտեղ ել բեմ ե զուրս զալիս հավաքական պայմանագրիրը։ Զնայած մեր որենսդրության պարզացրած սիստեմին և ինստանցիաներով որենսդերի արագ անցնելուն, այնուամենայնիվ համարական պայմանագրիրն ի վիճակի յե զեկրեսից ամբով արագ արձագանքի



Կյանքի պահանջներին և նորմայի յենթարկել աշխատանքի հառուկ պայմանները:

## ԻՆՉՈՒՄ ՎԱՐԵԼ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԿՆՔՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ

Վորպեսզի հավաքական պայմանագրերը ձեռնարկության մեջ ապահովի բանվորների ու վարչության նորմալ հարաբերությունները, վորպեսզի նա անհրաժեշտ հեղինակություն ստանա, հարկավոր ե, վոր յերկու կողմը կատարեն այն: Հարկավոր ե, վորպեսզի բանվորներն ու ծառայողները, վորոնց փոխարեն ստորագրում ե միությունը, իմանան, թե ինչ պարտավորություններ ե ստանձնել արհմիությունը նրանց փոխարեն, հարկավոր ե, վոր նրանք իրենց համաձայնությունը տան դրան:

Հավաքական պայմանագրերը պետք ե գրվեն լայն մասսաների նախնական քննության ու մշակման, այն մասսաների, վորոնց առողջ միությունն ստորագրում ե հավաքական պայմանագրերը:

Սակայն, հավաքական պայմանագրերի նախնական քննության կարդը միշտ գոյություն չուներ: Առաջները բանվորական մասսաները, վոր պարտավոր եյին կատարել միության կնքած հավաքական պայմանագրի պայմանները, հաճախ չգիտեյին արդ պարտավորությունները, վորովհետև նրանց մշակմանը չեյին մասնակցում և իրենց համաձայնությունը չեյին տալիս:

Բայց, վերջնական հաշվով, այն պայմանագրերը, վոր կնքված ե առանց միությունների անդամների գիտության, հարկավոր չեն անտեսական որդանին, վորովհետև նա վոչ մի յերաշխիք չի տալիս: Նա յերաշխավորություն չի հանդիսանում, վոր իրոք բանվորները վորոշ ժամանակ կաշխատեն պայմանագրի պայմաններով, նա ձեռնարկության մեջ չի ստեղծում անհրաժեշտ հանդիսատ, գործարար պայմաններ: Միությունների պայմանագրերին վերաբերող աշխատանքի այս թերությունները նշեցին Համ. Կկ(բ) 14-րդ համագումարը և միությունների 7-րդ համագումարը, մասնանշելով, թե ինչպես պետք ե վերացնել այն:

Միությունները պետք ե ձգտեն, վորպեսզի պայմանագրերին վերաբերող աշխատանքը գտնա լայն մասսայական միութենական աշխատանք: Վորպեսզի հավաքական պայմանագրերը հանդիսանա մի փոստաթուղթ, վոր թանկ գնահատվի յերկու կողմից, վորով

կառարվեն կողմերի վոխաղարձ պարտավորությունները, իսկ պրա անհրաժեշտ պայմանը հանդիսանում է հավաքական պայմանագրի նախագծի լայն մշակումը միության անդամների մասսայում: Ամեն մի միութենական որդան պարտավոր և հիշել, վոր բանվորական մասսաներն լիակատար ու անկալատելի իրավունք ունին իմանալու, թե միությունն ինչպիսի պահանջներ ե ներկայացնում տնտեսական որդանին, ինչպիսի պայմաններով պիտի աշխատեն նրանք և ինչպիսի պարտավորություններ ե ընկնում նրանց վրա նոր պայմանագրուվ: Ընդվորում բանվորական մասսաները պետք ե ակտիվ մասնակցեն այդ պայմանների և պարտավորությունների վորոշմանը: Այս պատճառով պահանջվում է, վոր պայմանագրի նախագիծը քննության առնվի գործարկումում, պատգամավորական ժողովում և ապա աշխատաղների ընդհանուր ժողովում, այսինքն պահանջվում է միության լայն սասայական ոչխատանք:

## ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՄԱՆԸ

«Բանվորների լայն ժողովներում հավաքական պայմանագրի կարեւրագույն մասերի քննությունը պետք ե կանոն դառնա» (Համ. Կկ (բ) 14-րդ համագումարի վճիռը):

Ամեն մի միութենական որդան, սկսած գործարկումից և վերջացրած միության կենտրոնական կոմիտեյով, պետք ե այս կանոնը պահի հատուկ խնամքով ու ամենաին վո'չ ձևականորեն: Բանվորների ու ծառայողների ընդհանուր ժողովում հավաքական պայմանագրի մշակումը պետք ե ուղեկցվի այն բանով, վոր միությունն ու տնտեսական որդանը պարզաբանեն ձեռնարկության ֆինանսական ու տնտեսական ներկա գրությունը: Միության ներկայացուցիչները պետք ե ուղարկությամբ հետեւն և զգացու վերաբերվեն բանվորական մասսայի առաջ քաշած պահանջներին, առաջարկներին և ուղղումներին: «Այսուեղ, իհարկե, հարց և ծագում, —ասում եր ընկեր Տոմակին Համ. Կկ (բ) 14-րդ համագումարում, —իսկ յեթե բանվորներն ընդհանուր ժողովում ավելի շատ պահանջնօն: ի՞նչ նորություն կա այսուեղ: Արհմիությունները տասնյակ տարիներով գոյություն ունեն, և ամենաեղ, միշտ ու ամենուրեք բանվորները հավաքական պայմանագրի կնքելիս

ավելի շատ են պահանջում . . . Այս պատաճառով միշտ ու ամեն տեղ բուրժուական պետության մեջ եւ, յերբ արհմիությունները ժողով են դավիս բանվորների հետ պայմանագիրը քննելու, բանվորը ավելի շատ ե պահանջում, իսկ միությունը բացարում է, թէ ինչու չի կարելի շատ ստանալ, ինչպես են ձեռնարկության միջոցները, ինչ կարելի յե վերցնել, ինչ չի կարելի և այլն: Այս պահանջում ե վոչ թէ խոսքով, այլ գործով աշխատանք կատարել մասսաներում, կիրառել համոզման, ապացույցների, պարզաբանությունների, դաստիարակության մեթոդներ, և վոչ թէ բլոկի այնպիսի սիստեմ, յերբ խաղաղ առանձնասենյակում յերկու հոդի ստորագրում են համարկան պայմանագիրը և ուղարկում»:

Այսպիսով, վորպեսզի ապահովվի բանվորական մասսաների ազգեցությունը կնքվող պայմանագրի բովանդակության վրա, միությունից պահանջում ե վոչ թէ սոսկ հայտնել ժողովին պայմանագրերի բովանդակությունը, այլ համերաշխ, աշխույժ ու ամեն տեղ մշակել այդ պայմանները միության անդամների մասսաներում: Իհարկե, այսպիսի պայմաններում միությունը պետք է հիմնալի ծանոթ լինի ձեռնարկության տնտեսության վիճակին: Այս տեսակի տից մեծ ու պատասխանառու աշխատանք ե ընկնում գործարկումների վրա, վորոնք հանդիսանում են միության սկզբանական ու հիմնական որգանները, նրա շոշափուկներն ու աչքերը ձեռնարկության մեջ: Գործարկումներն ամենից տվելի մոտ են կանոնած արտադրության և անմիջապես շփվում են բանվորական մասսաների հետ: Բնակոն և, վոր գործարկումների մասնակցությունը պայմանագիր կնքելու նախապատարաստական աշխատնքն անհրաժեշտ պայման է: Գործարկումը հավաքական պայմանագրի կնքման նախապատրաստական աշխատանքում պարտավոր ե ձիշտ հաշվառել ձեռնարկության տնտեսական գրությունը, աշխատանքի արտադրողականության կացությունը, մշակման նորմաները, գործավարձով աշխատող բանվորների մշակման չափը և այլն: Այս բոլոր տեղեկությունները միությանը հիմք են տալիս դատելու այն մասին, թէ արդյոք հնարավոր ե ձեռնարկությանը պահանջներկայացնել աշխատավարձի բարձրացման վերաբերյալ, արդյոք հարկավոր են բանվորների մշակման նորմաների վերաքննությունը և մեծացումը, ինչ չափով և այլն:

Հասկանալի յէ, վոր միության անդամների մասսայի ազդեցությունը հավաքական պայմանագրի պայմանների վրա չի կարող

և չպետք է սահմանափակվի միայն պայմանագրի նախնական քննությամբ ընդհանուր ժողովներում: Հաճախ միության բանակցությունները տնտեսական որգանների հետ բավական յերկար են տեղվում: Միությունը բանակցությունների ժամանակ ձգտում է, վոր տնտեսական որգանն ընդունի ներկայացվող պահանջները, նրա առաջ հիմնագործում է այդ պահանջները: Լինում են տարածայնության պատճառով ծագող կոնֆլիկտի դեպքեր, իսկ հաճախ միությունը զիջումներ և անում: Տնտեսական որգաննի հետ վարած բանակցությունները միության ամենադժվար աշխատանքներից ենկն են: Այս պատճառով լիովին անհրաժեշտ ու նպատակահարմար է մշտական կազ ունենալ միության անդամների մասսայի հետ, պայմանագրի կնքելիս նրան իրազեկ պահել բանակցություններին: Այն դեպքում, յեթե միությունն ստիգմած է պայմանագրին ստորագրել նշանակալի զիջումներ անելով, անհրաժեշտ է դալ անդամների, մասսայի մոտ ու նրան բացատրել արած զիջումների անհրաժեշտությունը և պայմանագրին ստորագրելու համար ստանալ բանվորական մասսաների համաձայնությունը: Այս անհրաժեշտ է այն պատճառով, վոր հավաքական պայմանագրը միության բոլոր անդամների կողմից, վորսնց վրա տարածվում է այն, լայն քննության առնելու պրոցեսում միայն ամեն մի բանվորի համար պարզ կը լինեն իր աշխատավարձի բարձրությունը վրայոց պայմանները, և այն պարտավորությունների կատարման անհրաժեշտությունը, վորոնք դրվում են նրա վագագական պայմանագրով: «Միությունների անդամների միայն նման գիտակլից մասնակցությունը հավաքական պայմանագրի նախազծի մշակմանը և նրա կնքման ամբողջ պրոցեսին, բոլոր բանվորների ծանոթյուններն իրենց արտադրության դրությունը և նրա դերին ժողովրդական տնտեսության ընդհանուր սիստեմում, անհրաժեշտ նախադրյաներ կը տա միաժամանակ իրականացնելու հաւատագույն արտադրության և միությունական կարգավահություն հավաքական պայմանագրի յերկու կողմերի համար պարագարի լինելու հիման վրա» (Համ. Կի (թ) 14-րդ համագումարի վեհուր):

ԱՐՀԱԿԱՎԱՐ ԴԵՐԸ ՀԱՎԱՔԱԿԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԵԶ ՄՏՆՈՂ ՊԱՅԱՆՁՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ  
ԳՈՐԾՈՒՄ

Համարական պայմանագրի կնքման ժամանակ ներկայացվող պահանջները մշակելիս միությունը պետք է դեկալար գեր ունենալու համար և բոլորին անթույլատրելի համարել այնպիսին: Հարկավոր և բոլորին առանց խորության ընդունում է զրությունը, յերբ միությունն առանց խորության ընդունում է ժողովներում բանվորների առաջ քաշած բոլոր պահանջները և առաջարկությունները, դրանց թվում նաև ակներև անբազործիլները, չպարզաբանելով մասսաներին այդպիսի պահանջների կատարման անկարելիությունը ձեռնարկության համար, առանց նըրանց քննաղատական գնահատման: Միությունը չպետք է և չի կարող քաշ գտնչից, նա չի կարող խրախուսել այնպիսի արագդրությունները և պահանջները, վորոնք չեն հաշվառում դրանց կատարման փաստական հնարավորությունները:

Ինչպես մենք արգեն վերել մատնանշեցինք, պայմանագրի այն պայմանները, վորոնք ծանր են և ձեռնարկության ուժերից վեր, հասցնում են ձեռնարկության փակմանը, կամ համարական պայմանագրիր մշտագետ խախտվում և և չի կատարվում տնտեսական որդանի կողմից: Այս դեպքում ձեռնարկության մեջ ստեղծվում են մշտական կոնֆլիկտների պայմաններ: Նման հավաքական պայմանագրիր խախտում է միության հեղինակությունն իր անդամների մասսայի աշխում և ձեռնարկության տնտեսությունը: Այս պատճառով, ընդհանուր ժողովներում անդամների մասսայի առաջ քաշած բոլոր պահանջներին ու առաջարկություններին ու շաղիքի բերաբերունք ցույց տալը և այն լրջորեն հաշվառելը պետք է զուգակցվի միությունների այն աշխատանքի հետ, վորը նպատակ ունի համբերատար ու ինսամքով պարզաբանել մտցրած առաջարկությունների իրագործելի կամ անբազործելի լինելը:

ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ՅԵՎ  
ՄԱՍՆԱՎՈՐ ԶԵՐՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Համարական պայմանագրի գերը միատեսակ չե պետական ու մասնավոր կամ կոնցեսիոն ձեռնարկությունների մեջ: Այդ նույն քան տարբեր ե, ինչքան տարբեր են պետական ու մասնավոր կամ

կոնցեսիոն ձեռնարկությունների եյությունն ու բնույթը (այս ժամանքի խոսվել ե յերկրորդ և յերրորդ գլուխներում):

Պողետարիատի դիկտատորայի պայմաններում հավաքական պայմանագիրը յերկակի նշանակություն ունի մասնավոր և պետական ձեռնարկության մեջ:

Մասնավոր ձեռնարկության մեջ հավաքական պայմանագիրը հանգիսանում և աշխատանքի և կապիտալի միջև մղվող տնտեսական կոմիտեի հարաբերակցության արտացոլում, պետական ձեռնարկության մեջ այն հանդիսանում և ամբողջ պետական արգումաբերության և ավլալ ձեռնարկության տնտեսական գրության արտացոլում պարզաբանական պետության ընդհանուր տրնական սիստեմում:

3. ՊԵՏԱԿԱՆ ՆՈՐՄԱՅԻ ՑԵՆԹԱՐԿԱՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԻՆՉՈ՞Ւ ՅԵ ՄՏՑՎՈՒՄ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ  
ՊԵՏԱԿԱՆ ՆՈՐՄԱՅԻ ՑԵՆԹԱՐԿՈՒՄ

Ի զանազանություն արգյունաբերության մեջ աշխատավարձի կանոնավորման ձեռքի, ներկայումս պետական հիմնարկությունների ծառայողների աշխատավարձը կանոնավորվում է պետական նորմայի յենթարկման կարգով: Մոտակայում յենթարկը գումար և շարունակ ավելի ու ավելի լայնացնել ծառայողների աշխատավարձի պետական նորմայի յենթարկման պրակտիկան: Դրա պատճառները հետեւյալներն են.

Մեր ապարատի կառուցման առաջին ընութաղրվում է այն բանով, վոր ամեն մի գերատեսչության (ԿԵԴՈՄСՏՎՈ) կամ Հիմնարկության համար բյուջեյով վորոշվում եր շտատի կոնտրագենար (անձերի թիվը) և աշխատավարձի Փոնդը: Բնդ ինքը գերատեսչությունը լիովին ինքնուրույն կերպով իրավունք ուներ իր ապարատում փաստակես պահել բյուջեյով վորոշված ծառայողների թվից ավելի կամ պակաս անձեր: Երանց վարձարարության համար ողտագործվում եր վոչ միայն բյուջեյով բաց թողնված աշխատավարձի Փոնդը, այլև ինայուրությունն ու բյուջեյի մյուս հողվածներից մնացած զումարները նույնպես վերացվում եյին աշխատավարձի Փոնդի: Ապարատի կրծառման և ծա-

ռայտղների նյութական գրության լավացման գործում այս պայմաններում հակայական նշանակություն ուներ այն հանդամանքը, վոր շտափի կոնտինգենտը ըլքանալու հետևանքով գոյացող աշխատավարձի Փոնդի մնացորդները ծառայողների աշխատավարձի մեծացման վրա պիտի գործադրվելին :

Լիովին բնական ե, զոր բյուջեային կարգապահության բացակարության, ծառայող անձերի թիվը գործելու և նրանց վարձատրության գործում վարկերի անորինողի լիակատար ինքնուրույնության ժամանակ, — զերատեսչությունների և հիմնարկների հետ արհմիությունների կնքած հավաքական պայմանագրերը դրական գործոն ելին։ Հավաքական պայմանագրերը սահմանափակում ելին զերատեսչությունների անձնական կամարականությունը ծառայողների աշխատանքի վարձատրության գործում, նրանք կազմակերպում ելին աշխատավարձը։ Միությունները նրանց մեջոցով իրականացնում ելին աշխատավարձի կանոնավորումը, նրա բարձրացումը և հենց զրանով, վարկերի ֆոնդային սիստեմի պայմաններում, ազդում ելին հիմնարկների աշխատանքի կազմակերպման վրա, շոատների կրծատման և ալպարատի պարզացման վրա։ Սրա մեջ եր հավաքական պայմանագրերի կազմակերպիչ նշանակությունը։

Ալպարատի կառուցման գործում նախահաշվային-բյուջեատարին սկզբունքների ամբացման հետ, բյուջեային կարգապահության արմատացման և ամբացման հետ, սահմանափակվում եր վարկերի անորինների անձնական հայեցողությունը բյուջեյով բաց թողնված միջոցների ոգտագործման մեջ։ Ամեն մի գերատեսչությունու ու հիմնարկություն իրավունք ուներ վարկերը ծախսել միայն բյուջեյում սահմանված ուղղակի նապատակի վրա։ Ուղղակի նպատակի վրա չպործադրված ծախքերի համար, վերահսկողության որպանները վարկերի անորինողի վրա յեն գումամ հաշվետակար, նրանից զանձում սիսալ ծախսված գումարները կամ զերածախքը։ Վարկերը չուղարկողներու հետևանքով կազմվող մնացորդները մանում են պետական գտնչի (ՌԱՅԱ) հրատությունը մեջ։ Սրանից բացառություն են կազմում միայն աշխատավարձի փոնդի մնացորդները, վարոնք առայժմ առաջմա նման կարող են ծախսվել ծախսավարձի մեջ մասնակի վարկերը։

Բյուջեային կարգապահության լրիվ իրականացումը պահանջում ե, զոր բյուջեային կանոնների ընդհանուր շրջանակությունում մեջ մացկին նաև աշխատավարձի վարկերը։

Գետությունը, ապարատի ինայողաբար կառուցելու նպատակներով, ձգտում ե բյուջեյում նորմայի յենթարկել գերատեսչության և հիմնարկության ամեն մի ծախքը՝ վարկի հաստատում գումար սահմանելու միջոցով։ Հետևաբար, հավաքական պայմանագրերի բոլոր պայմանները, վորոնք կրապված են գերատեսչության կամ հիմնարկության ծախքերի հետ, առաջույ կանխորոշված են բյուջեյի խստ նորմաներով։ Յեվ յեթե հավաքական պայմանագրերն անցնում են բյուջեյի նորմաներից, այն ժամանակ կամ հավաքական պայմանագրիրը մի թղթի պատառ և դատավարությունը կամ ինքը հավաքական պայմանագրիրը մի թղթի պատառ և դատավարությունը, վոր վոչ վոքի համար պարտավորեցուցիչ չե։

Դեռ ավելին։ Ապարատի կառուցման գործում նախահաշվային բյուջեային սկզբունքներն ամբացմանելու համար պահանջվում է վոչ թե ծառայողների կոնտինգենտի ընդհանուր գործումը, այլ նրանց ճշգրիտ թիվը՝ թվելով պաշտոնները և պրոֆեսիաները և ժամանանչելով կատարած աշխատավարձը վոչ թե աշխատավարձի փոնդի ընդհանուր գործումը, այլ վարկերի բոլորովին ճվղբիտ հաշվումը՝ ամեն մի պաշտոնի և պրոֆեսիայի համար սահմանված հաստատում դրույքների հիման վրա։ Այսպիսով, բյուջե կազմելու համար պահանջվում են պաշտոնների հաստատուն շտատներ և ամեն մի պաշտոնի հաստատուն հաստիք։ Իսկ հավաքական պայմանագրերը չելին կարող նախատեսել հաստատուն շտատներ, վարովհետեւ շտատների վորոշումը վարչության գործն և, վոր միություններն իրենց վրա վերցնել չեն կարող։ Այսպիսով, միությունները պետք ե վճռելին՝ կամ նրանք հավաքական պայմանագրերի, իբրև աշխատավարձի կանոնավորման սիստեմի, պահպանման կողմնակից են և զեմ են բյուջեային կարգապահության, զեմ են ապարատի կառուցման գործում նախահաշվային-բյուջեային սկզբունքին, — կամ նրանք նախահաշվային-բյուջեային սկզբունքի, բյուջեային կարգապահության ամբացման կողմնակից են, վորի համար հարկավոր և հրաժարվել աշխատավարձը հավաքական պայմանագրերի կնքման կարգով կանոնավորելուց։

Այս հարցը լուծելու ժամանակ, ինչպես և միշտ, միությունները յելակեա ունեյին ամբողջ բանվոր գասակարգի շահերը, վար շահագրդումով և կառավարման պայմանագրատի ամենամեծ

կբճառումով, ապարատից խնայածը յերկրի արտադրողական ուժերի զարգացման, նրա ինդուստրացման վրա գործուլը ըլրելով:

Ապարատի կառուցումը նախահաշվային-բյուջետային սկզբ քունքներով, բյուջետային կարգապահության խստագույն կատարման սկզբունքներով, լիովին համապատասխանում և բանվոր դասակարգի շահերին: Այդ թույլ և տալիս խորհրդային պետությանը պլանային կազմակերպված կարգով քիչ ծախքեր պահանջող ապարատ կառուցել, կրճատել անարտագրողական ծախքերը, խիստ նորմայի յենթարկել գերատեսչության ամեն մի ծախքը, սահմանափակել հիմնարկությունների կամայականությունը միջացների ծախսման գործում, վերահսկել նրանց ծախքերը, մնացորդները պետական հասույթ գարձնելով: Սրան աշխացելու նպատակով, արհմիությունները հիմնարկությունների վերաբերմանը հրաժարվեցին հավաքական պայմանագրերի սիստեմից և արտահայտվեցին հոգուտ այն բանի, վոր ծառայողների աշխատավարձը կանոնադրի պետական նորմայի յենթարկման կարգով:

Այսպիսով, անցում կատարելով հավաքական պայմանագրի սիստեմից գեղի ծառայողների աշխատավարձի պետական նորմայի յենթարկման սիստեմը, հիմք ունենալով հաստատուն շտատների սահմանումը, միությունները համարում եյին, վոր պետական նորմայի յենթարկման սիստեմն անխուսափելիորեն կղադարեցնի շտատների կառուցման և աշխատավարձի սահմանման գործում գերատեսչական կամայականությունը, ծառայողների աշխատավարձն ավելի մեծ չափով կախման մեջ կդնի ժողովրդական տրնառնության ընդհանուր կացությունից: Դրա հետ միասին, այդ սիստեմը կը հանդիսանա ամենալուրջ միջոցներից մեկը բյուրոկրատիզմի գեմ պայքարելու հանուն պետական և տնտեսական առարատի առողջացման, պարզացման և եժանացման: Աշխատավարձի հավասարեցման, ծառայողների աշխատանքի վարձատրության բազմերանգության վերացման խնդիրը բոլում եր սրանից, բայց դա ծառայողների աշխատավարձի պետական նորմայի յենթարկման սիստեմն իրագույն գերազանցությունների վերաբերման սիստեմից մեջ կերպ չի կարող փոխարինել աշխատավարձի պետական նորմայի յենթարկման սիստեմին և կարող ե զիստեմ իրակ մի անցողիկ աստիճան գեղի վերջինը, ընդ վորում բոլորովին վոչ պարունակությունը աստիճան:

#### ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՀԱՍՏԵՄԻ ՍԻՍՏԵՄԸ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՅԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՆՈՐՄԱՅԻ ՅԵՆԹԱՐԿՈՒՄՈՎ

Ներկայումս մի շարք միություններ (Խորածառ, Լուսավոր, Բժնանաշխատական) հավաքական պայմանագրեր են կնքում, տարիքային գրույքների և տարիքային ցանցի փոխարեն պաշտոնների հաստատուն հաստիքների սիստեմ սահմանելով: Հավաքական պայմանագրերով վորոշված հաստատուն հաստիքների սիստեմը հնարավորություն և տալիս վերացնել միատեսակ պաշտոնների վարձատրության բազմերանգությունը, և նրա իրագործման ժամանակ միությունը հնարավորություն ունի բարձրացնել աշխատողների ցած վարձատրվող խմբակների աշխատավարձը: Պայմանագրի կարգով հաստատուն հաստիքները սահմանելով, միությունները և հիմնարկությունները հավաքական պայմանագրով չեն սահմանում և չեն կարող սահմանել հաստատուն շտատները: Բայց չե վոր ծառայողների թվի վորոշման, հաստատուն շտատների սահմանման գործում գերատեսչական կամայականության վերացումը պետական նորմայի յենթարկման հիմնական ու վլխավորագույն խնդիրն է: Աշխատավարձի պետական նորմայի յենթարկման սիստեմը միևնույն ժամանակ պաշտոնների թվի ու անունների, այսինքն շտատների, պետական նորմայի յենթարկման սիստեմը է: Ահա ինչու հավաքական պայմանագրերով վորոշվող հաստիքի սիստեմը վոչ մի կերպ չի կարող փոխարինել աշխատավարձի պետական նորմայի յենթարկման սիստեմին և կարող ե զիստեմ իրակ մի անցողիկ աստիճան գեղի վերջինը, ընդ վորում բոլորովին վոչ պարունակությունը աստիճան:

#### 4 ՊԼԱՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

#### ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՈՒԺԵՂԱՑՈՒՄԸ

Խորհրդային յերկիրը պետք և ամենամեծ չափով ոգտագործի անտեսության հանքայնացման ոգուտները և առավելությունները: Այդ առավելություններն ամենից առաջ տնտեսության պլանավորման և տնտեսական շինարարության զարգացման դիտակցական գեկատարության մեջ են:

Տնտեսական շինարարության ասպարիզում կենտրոնացրած պլանավորման և ղեկավարության ուժեղացումը կառաջացնի նույնաշխատավարձի կանոնավորման յեղանակների վորոշ փոփոխություն։ Աշխատավարձը կազմում և սնտեսական հաշվիների նշանագործ մասը և առանց ընդհանուր պլանի յենթարկելու այն, անկարելի յեղեկավարել տնտեսությունը։ Պետականի տվյալներով գարձու աշխատանքի մարդկանց յեկամուտների չափը համում է։

1926—27 թ.

6,962,000 չերվոն ոռուր.

1926—27 թ. աշխատավարձի ֆոնդը կազմում էր ամող ժողովրդական յեկամուտի, 21,8 միլիարդ ռուբլու, մոտ 30%։

Ահա ինչու Արհմիությունների Համամութենական VII Համագումարը, վոր Հրավիրվեց տնտեսական զարգացման յերկու եպօնայի սահմանում, հետեւյալ վճիռն ընդունեց աշխատավարձի քաղաքականության պլանայնության ուժեղացման մասին։

«ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության շինարարության պլանային սկզբունքի, իրեւ սոցիալիզմի գործնական շինարարության անհրաժեշտ նախադրյալի, ուժեղացումը չի կարող տեղի անհնալ առանց աշխատավարձի համապատասխան պլանավորման, աշխատավարձ, վոր Հանդիսանում և պլանային հաշվի հիմնական տարրերից մեկը։

Այս բոլորը միասին առած պահանջում են ինչպես աշխատավարձի ասպարիզում արհմիությունների ընդհանուր քաղաքականության համաձայնեցում ընդհանուր տնտեսական պլանի հետ, այնպես ել բանվորների և ծառայողների աշխատավարձի կանոնավորման ասպարիզում նրանց աշխատանքի մեթոդների փոփոխություն՝ ավելի մեծ պրանայնության և կենտրոնացման ուղղությամբ։

## ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՊԼԱՆԱՅԻՆ ԿԱՆՈՆԱՎՈՐՈՒՄԸ ՅԵՎ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Իսկ ինչո՞ւմն և կայանում աշխատավարձի պլանային կանոնավորումը։ Արդյոք այդ չի նշանակում հրաժարում պայմանագրային հարաբերությունների մեթոդից, և արդյոք չի մատցվում արդյունաբերության մեջ աշխատավարձի պետական նորմայի յենթարկում։

28

Ցեթե մինչև այժմ արդյունաբերության տվյալ ճյուղում աշխատավարձի միջին բարձրացումը կազմում էր իրեւ հետեւանք աշխատավարձի բարձրացման առանձին տրեստերում, ապա աշխատավարձի պլանային կանոնավորման ժամանակ բարձրացումը տեղի յեւնենում հակառակ կարգով՝ ամբողջ արդյունաբերության ընդհանուր գումարներից առանձին տրեստեների և ձեռնարկությունների կոնկրետ թվանշանները։ Աշխատավարձի կենտրոնացրած պլանային կանոնավորումը կայանում է նրանում, վոր պետության պլանային բարձրացական միությունների անպայման մասնակցությամբ, պլանային կարգով վորոշում են այն միջոցների ընդհանուր գումարները, վորոնք նախանշված են աշխատավարձի համար ըստ արդյունաբերության ճյուղերի։

Արդյունաբերության ամեն մի ճյուղի համար ուահմանված ժիջոցները միության և տնտեսական կանոնավորիչ որդանի (ՖՏԳԷ) միջև տեղի ունեցող համաձայնության կարգով բաշխվում են ըստ առանձին տրեստեների ու տնտեսական միացումների։ Ընդ ամին, բնական և, հաշվառվում են տվյալ արեստի առանձնահատկությունները, նրա ձեռնարկություններում աշխատավարձի տնհրաժեշտ բարձրացման չափը և այլն։ Տրեստին բաց թողնված ժիջոցների հիման վրա ուղանց սահմաններում, միությունները կեքում են հավաքական պայմանագրեր։

Հետեւաբար, այստեղ աշխատավարձի միակողմանի պետական նորմայի յենթարկման և հավաքական պայմանագրերի մեթոդից հրաժարվելու վոչ մի նշան չկա։ Ինչպես միջոցների բաշխումն արեստների միջև, այնպես ել այդ միջոցների բաշխումը ամեն մի տնտեսական միացման ներսում յեղած ձեռնարկությունների միջև, բացառապես տեղի յեւնենում կողմերի փոխադարձ համաձայնությամբ։

Արհմիությունների Համամիութենական VII Համագումարը վահատար բացարձակությամբ հաստատում է այդ գրությունը։ Ժամանակնելով՝ «Համագումարն ընդգծում է, վոր աշխատավարձի բարձրացման պլանային ու կենտրոնացրած կանոնավորումն արհմիությունների անպայման մասնակցությամբ, կտրուկ զանազան վում և աշխատավարձի պետական նորմայի յենթարկումից, այն բանով, վոր միություններին բավականաչափ նախաձեռնություն

և թողնում տեղերում պարմանագրի կարգով տվյալ տնտեսական ժիավորի սահմաններում կանոնավորելու աշխատավարձը»:

## ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԿԱՆՈՆԱՎՈՐՈՒՄՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑԻ ՃՅՈՒՂԵՐԻ ՄԵԶ

Իբրև արտադրության կազմիտալիստական յեղանակի ժառանգություն, մենք չափազանց բարձերանգ աշխատավարձ ենք ստացել արդյունաբերության առանձին ճյուղերի վերաբերմամբ։ Արդյունաբերության առանձին ճյուղերի բանվորների անկազմակերպվածությունը և թույլ դիմադրության կարողությունը, կանանց ու յերեխաների աշխատանքի չափորժումը թույլ եյին տալիս կազմիտալիստաներին չափազանց ցած աշխատավարձ սահմանել։ Բավական և մատնանշել, վոր արդյունաբերության այնպիսի ճյուղերում, ինչպես լուցկու, ծխախոտի, մանածագործական, վորաեղ առավելապես կիրառվում եր կանանց աշխատանքը, աշխատավարձը մինչև պատերազմը (1913 թ.) 16—18 ո. եր։ Այդ նույն ժամանակում մետաղագործական և հանքային արդյունաբերության մեջ աշխատավարձը 34—35 ոուրի յեր։ Բնական ե, վոր կազմիտալիստական արտադրության անարխիայի պայմաններում աշխատավարձը պլանային կարգով կանոնավորել վոչ վոք չեր կարող։ Այդ հակառակ և կազմակերպմի բնույթին։

Իհարկե, աշխատավարձի կանոնավորումն ըստ առանձին արտադրությունների դեռ չի նշանակում բանվորների աշխատանքի բացարձակ հալասար վարձատրության սահմանում։ Այդ մեզ մոտ չի կարող լինել առանձին արտադրությունների հետո աշխատանքի պայմանների այլազանության և բանվորների վարձության (վորակման) զանազան աստիճանի չնորդիվ։ Բայց բոլորվին ակներեւ և և այն, վոր եւ ժամանակակից կազմիտալիստական չահաղործման հետեւ անգույքած աշխատավարձի տարբերությունը չի կարող հանդուրժվել խորհրդային յերկրում։

Հետեւրար, աշխատավարձի կանոնավորումն ըստ արտադրությունների պետք և կայանա նրանում, վորպեսզի սահմանվի ու թույլատրվի առանձին արտադրությունների բանվորների աշխատանքի վարձատրության այնպիսի տարբերություն, վորն արդարանում և բանվորների վորակման տարբերությամբ, աշխատանքի պայմանների տարբերությամբ, նույնպես և այն նշանակությունով ու տեղով, վոր ամեն մի առանձին արդյունաբերություն գրավում է մեր ժողովրդական տնտեսության ընդհանուր սիստեմում։

Մեզ մոտ այս ուղղությամբ վորոշ նվաճում կատարված է։ Վերցնենք մետաղագործի և մանձագործի միջին դատումը։ Մինչև պատերազմը մետաղագործը դատում էր 35 ո., իսկ մանձագործը 17 ո., այսինքն մետաղագործը 2,6 անգամ ավելի յեր դատում, քան մանձագործը։ 1925—26 թ. մետաղագործը դատում էր 67 ո., իսկ մանձագործը 48 ո. այսինքն մետաղագործը մանձագործից արգելն ավելի յեր դատում միայն 1,4 անգամ։ Այս աշխատավարձի կանոնավորման նշանակալի նվաճում է։

Նոր տնտեսական քաղաքականության առաջին շրջանում, աշխատավարձի պլանային կանոնավորման բացակայության ժամանակ, նրա աճումն ավելի արագ է կատարվում։ արտադրության այն ճյուղերում, վորոնք աշխատում եյին լայն շուկայի համար։ Վասնգ կար, վոր արտադրության ու վաճառահանության լովագույն պայմաններում գտնվող տնտեսության ճյուղերն աշխատավարձի խնդրում շատ առաջ կերպան։ Իսկ արդյունաբերության և տնտեսության այն ճյուղերը, վորոնք յերկրի արտադրողական ուժերի զարգացման գործում կարևորագույն նշանակություն ունին (մետաղաքարդյունաբերությունը, հանքայինը, յերկաթուղարինը, տրանսպորտը) հետ կը կննին։

Արհեստակցական միությունները հետեւղականորեն անց եյին կացնում արդյունաբերության զանազան ճյուղերի աշխատավարձի հավասարեցման դիմ։ Հավաքական պայմանագրերի վերակիքան ժամանակ առաջ եյին քաշվում աշխատավարձի տեսակետից հետամնաց անտեսության ճյուղերը։ Արդյունաբերության առաջ ընկած ճյուղերը մի քիչ կասեցվում է. ու. ժամանակակի վրա։ Աշխատավարձի այս քաղաքականությունը վոր վարում եյին միությունները բանվորական մասսաների լայն աշխացությամբ, բավական հաջող գուրս յեկավ, ինչ վոր վկայում են հետեւվայալները. (տես գրքի 141 էջը)։

## ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԿԱՆՈՆԱՎՈՐՈՒՄՆ ԶԵՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՍՈՒՄ

Կազմիտալիզմի ժամանակ աշխատանքի վարձատրության բաղմերանգությունը, անհամաշափությունը միայն արդյունաբերության առանձին ճյուղերում չե, վոր գոյություն ուներ։ Արդյունաբերության ամեն մի ճյուղում, ամեն մի ճյուղում, ամեն մի ճյուղում ներ-

սում մինչև պատերազմը գրյություն ունելին չափազանց մեծ ասրբերություններ բանվորների առանձին խմբակների միջև։ Արինակ՝ մետաղադորձների դատումի ծայրասահմանները մինչև պատերազմը այսպէս ելին։

Բանվորների 4,58 % որական ստանում եր մինչև 50 կոպ.

» » 4,71% » ստանում եր 4 ո. ավելի, այսինքն՝ բանվորների մի խմբակը 8 անգամ ավելի յեր ստանում մյուս խմբակից (հարաբերակցությունը 1:8):

Բանվորների 12,78% որական ստանում եր մինչև 75 կող.  
 » » 12,62 որական ստանում Եր 3 ռ. ավելի, այսինքն՝  
 չորս անգամ ավելի, քան առաջին խմբակը (Հարաբերակ-  
 ցությունը 1:4):

Կապիտալիստական Ռուսաստանում վորակյալ և անվորակյալ բանվորների դատումի մեջ յեղած այսպիսի տարբերությունն առաջ եր գալիս հետեւյալ պատճառներով .

ա) Տեխնիկայի զարգացման ցած մակարդակի և աշխատանքի անբավարար բաժանման հետևանքով, արդյունաբերության մեջ կիրառվում եր բարձր գործակում ունեցող լանվորի այնպիսի տիպը, վորով վարժման վրա մէծ ծախքեր ելին դնում:

բ) Եժան, անվորակյալ բանվորական ուժի մշտական ավելցուկի գոյությամբ, վոր ցարիզմի ժամանակ առատորեն մատակարարութեր աղքատացած, անդրագետ դյուցը.


գ) Վորակյալ բանվորների ավելի մեծ կաղմակերպվածությամբ, վոր նրանց ողնում եր պաշտպանել իրենց շահերը կապիտալիստների դեմ մղվող պայքարում :

Յեթէ վերջին հանդամանքը հեղափոխությունը հաշվից դուրս գցեց, ապա յերկու առաջինը ձեռնարկության ներսում նշանավոր շափով գեռ շարունակում են աղղել աշխատավարձի կացության վրա: Ակներեւ և, սա ցարելիք այնպիսի ժառանդություն է, վոր կարող է աստիճանաբար վերացվել ու վոչնչացվել միայն արդյունաբերության տեխնիկան վերակառուցելու հետ, իրեւ հետեւանք նրա վերակազմության: Արհմիությունների խնդիրը տարբիֆային աշխատանքի ասպարեզում հանդիսանում է այդ տարբերության վերացումը, վորի համար ել նրանք ձեռնարկության ներսում պետք է զբաղվեն աշխատավարձի կանոնավորման հարցերով:

32

ԽՈՇՈՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՏՐԱՆՍՈՐՏԻ ԲԱՆԿՈՐ-  
ՆԵՐԻ ԱՄԱԿԱՆ ՄԻՋԻՆ ԴԱՏՈՒՄԸ 1923 24 թ. II ՅԵՌԱՄ-  
ԱՅԱԿՈՒՄ ՅԵՎ 1925 26 թ. IV ՅԵՌ. ԶԵՐՎՈՆ ՌՈՒԲԼԻՆ.

(Բայց Աշխատանիքի Վիճակադրական կենսու Բյուբոյի տվյալների).



Այս ասպարելիում մենք գորոշ նվաճումներ ունենք: Որինակ՝ կալոմենսկի գործարանի բանվորների աշխատավարձի հետազոտությունից, վոր 1926 թ. կատարեց մետալիստների կենակոմը, պարզվեց հետեւյալը:

Բանվորների աշխատավարձերը, շերպոնի հաշվով, մինչոպատերազմյան աշխատավարձի համեմատությամբ աճեցին.

մինչեւ պատ. 10-20 ս. դաշտովի այլին, բարձրացնել է 2,61 անգ.

9	9	20 - 30	<i>u.</i>	9	9	9	2,58	9
9	9	30 - 40	<i>u.</i>	9	9	9	2,15	9
9	9	40 - 50	<i>u.</i>	9	9	9	1,91	9
9	9	50 - 60	<i>u.</i>	9	9	9	1,54	9

Հետեւաբար, ինչքան ցած աշխատավարձ եր սոտնում բնագործ մինչեւ պատերազմը, այնքան ավելի յէ աճել նրա աշխատավարձը 1926 թ. ապրիլին չերգոնի հաշվով:

Հարկավոր և նկատել, զոր բացի վերեւ նշված պատճառներից, հաճախ բանվորների նույնիսկ միատեսակ խմբակների աշխատանքի վարձատրության անհամաշխափությունը բղխում եր մինչպատճերազմական ժամանակներում աշխատավարձի հաստատման զործում թագավորող միահեծանությունից։ Կապիտալիստը միաձայն կերպով սահմանում էր բանվորի աշխատավարձի շահքը, մեկին ավելացնելով, մյուսին պակասեցնելով։

Դեռ 1917 թ. առաջին հավաքական պատմանադրերը կնքելիս  
արհմբություններն առաջ քաշեցին տարիքային ցանցը, իրեւ  
արդյունք կամայականության դեմ մզվող պայքարի: Այդ ցան-  
ցը բավարբներին բաժանում եր վորոշ կատեկորիաների, ամեն մի  
կատեգորիային նշանակվում եր աշխատավարձի վորոշ չափ, վոր  
վարձողը միանձնյա կերպով փոփոխել չեր կարող: Տարիքային  
ցանցը մինչև այժմ ել լիովին ու ամբողջությամբ պահում և աշ-  
խատավարձը կանոնավորողի (սեպականորի) նշանակությունը:  
Տարիքային ցանցն ամեն մի արտադրության առանձնառկու-  
թյուններին ու պայմաններին ամենամեծ չափով հարմարեցնելու  
նպատակով, Միությունների ՎՊ Համագումարն անհրաժեշտ հա-  
մարեց մի քանի ցանց կառուցել (ինժեներների, բանվոր աշա-  
կերտների համար) ամեն մի արդյունաբերության ճյուղի համար  
տուանձին:

ԻՆՉՈՊԵԴԻԱ ՄՇԱԿԱՆԱԿԱՆ Վ. ԳԼՈՒԽՈՎԸ

Տվյալ գլխի մշակման ժամանակ կարեւոր և պարզել մխությունների տարիքային աշխատանքի, իրբև աշխատավարձի կազմակերպված կանոնավորման եյտթյունը՝ բանվորների և ժողովրդական տնտեսության շահեցին համապատասխան։ Անհրաժեշտ և նշել մտասների ժամանակցությունը տախիքային աշխատանքին հավաքական պայմանագրերի կնքման ժամանակ։

Մշակմանը դիմելով, Հարկավոր և հիշել, վոր այս գլուխը ամենասերտ կերպով կազմված է նախորդի հետ, վորով հետեւ նա լայնացնում ու մանրամասնում և արհճի փությունների աշխատավարձի քաղաքականությունը, վորի մասին սուաց խռովել ե:

Ծանոթանալով աշխատավարձի կանոնավորման և նորմայի յենթարկման ձևելիքին, վոր անմիջապես իրազործում էն միությունները կամ այլ իրազործվում և նըրանց մասնակցությամբ (Հավաքական պայմանագիր, աշխատանքի պայմանագիր, տարիփայլին համաձայնություն, պետական նորմայի յենթարկում, աշխատավարձի փոնդերի բաշխում և այլն), պետք եռ ուշադրություն դարձնել միութենական կազմակերպության չափանակության կարևոր գերի վրա աշխատավարձի համաձայնությունների իրականացման ժամանակ նույնիսկ անհատական աշխատանքի պայմանագիր կնքելու դեպքերում։ Այս կապակցությամբ ուշադրություն դարձնել պետական որպանների գերի վրա (աշխատանքի բաժիններում հավաքական պայմանագրերի գրանցում, վոր կնքած համաձայնությունը խորհրդացնելու)։

Հավաքական պայմանագրերի հարցը մշակելիս, պետք է քննել տվյալ ձեռնարկության գործող հավաքական պայմանագրը (կամ տվյալ միության գլխավոր հավաքական պայմանագրը), յերե- վան բերել նրա իրավական և տնտեսական առարկերն ու նրանց նշանակությունը: Անհրաժեշտ է հավաքական պայմանագրի բո- վանդակության քննության միջոցով պարզաբանել նրա բնույթը, իրեն տնտեսական որպանի ու բանգորչների յերկարագմանի պարագ-

վորոթյան, նույնպես և հավաքական պայմանագրից բղիող աշխատանքի կանոնադրման լրացուցիչ տարրերը (ներքին կարգի կանոններ, գնահատումներ, տարբաֆային համաձայնություններ և այլն): Հարկավոր և ուշադրություն դարձնել այն բանի վրա, վորմեր պարբաններում հավաքական պայմանագրիր պետութան ձևադրկություններում տարբերվում և մասնավոր ձեռնարկությունների հավաքական պայմանագրից նրանով, վոր տառջին զեղություն հիմնվում և ժողովրդական տնտեսության համապատասխան ձյուղի կացության, իսկ յերկրորդում—պայմանագրությունների հարաբերակցության վրա (մասնավոր անհանուստեր և միություն):

Հավաքական պայմանագրերի և պետական նորմայի յենթարկման կողմբն, հիմնական ուշադրություն պետք է նվիրել նույն բառարդությունների և, համապես, բառ ձեռնարկության աշխատավորձը կանոնադրելու հարցին:

### ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կազմեցիք հավաքական (դիմումուր ու տեղական) պայմանագրի սխեմա:
2. Քննության առեք տեղական հավաքական պայմանագրիրը:
3. Քննության առեք գործարակությունների համարական պայմանագրի վերակնքման կամպանիայի իրազործումը:

### ԱՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Աշխատավորձի կանոնավորման ինչպիսի ձեեր կոյսություն ունեն:
2. Մեզ մաս այժմ վո՞րակ և ինչո՞ւ յե մտցվում աշխատանքի պետական նորմայի յենթարկում:
3. Ինչո՞ւ յե միությունը կնքում ձեռնարկությունների պարանագրերը և համաձայնությունները:
4. Արդյոք միությունը մասնակցո՞ւմ և աշխատանքի պայմանագրի կնքման գործին:
5. Ի՞նչ առավելություններ և թերություններ ունին գլխավոր և տեղական հավաքական պայմանագրերը:
6. Ինչո՞ւմն է միության տարբաֆային աշխատանքի տարբերություններ պետական ձեռնարկության և մասնավոր ձեռնարկության մեջ:
7. Ի՞նչ ուղղությամբ պետք է կանոնավորվի աշխատավորձը ձեռնարկության ներսում:


### ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


#### ԲԻԶ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- \* «Хрестоматия по профграмоте» вып. 1. бес. III.
- \*\* М. Шуликов. — Коллективный договор, изд. ВЦСПС.
- \*\* С. Рабинсон. — Политика и практика заработной платы профсоюзов, изд. „Долой неграмотность“.
- \* Ф. Ревзин. — Политика зарплаты и колдоговор, изд. ВЦСПС

#### ՇԱՏ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- \* Трахтенберг. — Коллективный договор.
- \* Рабинович-Захарин. — Госнормирование зарплаты.
- \* Резолюция VII Съезда Союзов о тарифной работе.
- \* Доклад т. Владимира VII Съезду Профсоюзов.
- \* Отчет ВЦСПС VII съезду — раздел о колдоговорах.
- \*\* Стенографический отчет VII Съезда Союзов. Доклад и прения о тарифной работе на Пленуме и в тарифной секции.







ԳՐԱԾ 25 ԿՈԹ.